



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

---- սեպտեմբերի 2018 թվականի №----Ս  
ք. Երևան

**«ԱՐՏԱՎԱՆ ՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
«ԱՐՏԱՎԱՆ ՓՇԷԿ-2» ՓՈՔՐ ՀԻՂՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ  
(ՀՉՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷՆ№0587 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի դեկտեմբերի 23-ի №450Ա որոշմամբ «ԱՐՏԱՎԱՆ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արտավան համայնքի վարչական տարածքում՝ Արփա գետի Արտավան վտակի վրա, «Արտավան ՓՇԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0587 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0587 լիցենզիա),

բ) Հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի 450Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» №275Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 2-րդ կետի 2-րդ ենթակետով ԼԷ №0587 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով, Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, Ընկերությանը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երեք միլիոն դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2019 թվականի հունիսի 30-ը գործողության ժամկետով, սակայն Ընկերության կողմից այն չի ներկայացվել,

գ) Հանձնաժողովը 2018 թվականի օգոստոսի 31-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին

Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2018 թվականի օգոստոսի 31-ի №ԱԲ-2380ի գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2018 թվականի սեպտեմբերի 18-ի գրությամբ տեղեկացրել է, որ առողջական խնդիրների պատճառով տնօրենը բացակայում է Հայաստանի Հանրապետությունից, ուստի երաշխիք ներկայացնել չի կարող: Միաժամանակ Ընկերությունը խնդրում է կասեցնել հարուցված վարչական վարույթը՝ մինչև Ընկերության տնօրենի վերադառնալը Հայաստանի Հանրապետություն,

ե) վարչական վարույթի շրջանակում փաստվել է Ընկերության կողմից Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի խախտման հանգամանքը, իսկ Ընկերության տնօրենի բացակայությունը օրենքով նախատեսված հիմք չէ վարույթը կասեցնելու համար, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի խախտման հիմքով կասեցնել ԼԷՆ°0587 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԸ՝**

**Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**